

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԽՈՒՄԲ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ և ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԳՈՐԱՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՂԵԿԱԿԱՐ՝ ՍՈՒՄԱՆՆԱ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ՈՒՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ԱՄՓՈՓՈՒՄ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Լավ թե վատ, ճիշտ թե սխալ, անընդհատ հաղորդակցվում է իր մայրենի լեզվով, արտահայտում իր հույզերը, մտքերը, ճանաչում, ուսումնասիրում է այն, փորձում հասկանալ: Ուստի մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, որովհետև մարդն այն յուրացնում ու կատարելագործում է ողջ կյանքի ընթացքում:

Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է և սերտորեն կապված է սովորողի ամենօրյա գործունեության հետ: Այն պետք է նպաստի սովորողի՝ բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող, տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանն ու ինքնարտահայտմանը:

Ինչպես բոլոր լեզուները, այնպես էլ հայերենը ժամանակի ընթացքում փոխվում է: Այդ է պատճառը, որ ժամանակ առ ժամանակ տարբեր լեզուներում ձեռնարկվում են ուղղագրության վերափոխումներ: Մեսրոպյան ուղղագրության առաջին փոփոխությունները կատարվել են 12-րդ դարում, երբ ավելացվում են Օ ու Ֆ տառերը, կետադրական նշաններ, ինչպես նաև հետագայում՝ կցագիր և-ը, որը ստեղծվում է հայոց մեջ տպագրության գյուտի իրացումից հետո: Ձևավորվում է հայերենի ավանդական ուղղագրությունը:

Կրտսեր դպրոցում մայրենի լեզու առարկան անվանում ենք մայրենի խոսքի մշակույթ: 5-րդ դասարանում Մայրենիի ինտեգրված դասընթացում ուսումնասիրում են Հնչյունաբանություն, որի բովանդակությունը կազմում են լեզվական նախագիտելիքները՝

- Հնչյունը որպես արտասանական նվազագույն միավոր
- Հնչյուն և տառ
- Հայերենի հնչյունները և նրանց դասակարգումը. ձայնավոր և բաղաձայն հնչյուններ
- Հայերենի երկհնչյունները, դրանց ուղղագրությունը
- Վանկ և նրա կազմությունը. բառերի վանկատումը
- Միավանկ և բազմավանկ բառեր
- Բաց և փակ վանկեր

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

19-րդ դարում աշխարհաբարի տարածմամբ (հատկապես Խ. Աբովյանի «Վերջ Յայաստանի» վեպից հետո՝ 1858 թ.) նոր խնդիր է առաջանում, քանի որ կանոնարկված չէր հայերենի նոր գրական լեզվի ուղղագրությունը, և պարզ չէր, թե ո՞ր բառը ինչպե՛ս պետք է գրվի: Պատճառները օբյեկտիվ էին և սուբյեկտիվ: Օբյեկտիվ պատճառներից էր հայոց պետականության բացակայությունը և հայերի ցրվածությունը 3 պետություններում (Օսմանյան Թուրքիա, Ռուսաստան, Պարսկաստան) արդեն ձևավորված մի քանի գաղութներում: Սուբյեկտիվ պատճառներից էր այն, որ ազգային գիտակցության վերելքի շնորհիվ լույս են տեսնում բազմաթիվ նորաբաց թերթեր, հիմնվում են մեծաքանակ դպրոցներ, որտեղ գործադրվում էր աշխարհաբարը՝ չունենալով միասնական կանոններ: Լինում էին փոքր ու մեծ առաջարկներ մտավորականների կողմից (Ղազարոս Աղայան, Նիկողայոս Ադոնց, լեզվաբան Ս. Սարգսյան, Ստեփան Մալխասյանց (1910) և այլք): Որպեսզի վերջ տրվի անորոշությանը, Կաթողիկոսի կոնդակով փորձ է արվում պարտադրել միասնական ուղղագրություն՝ հիմք ընդունելով Մանուկ Աբեղյանի մշակված ավանդական ուղղագրության կանոնները աշխարհաբարի համար (այդ ժամանակ նա դեմ էր ուղղագրության փոփոխմանը): Բայց կոնդակը չի ունենում սպասելի արդյունքը, և արդեն 1912-ին Յայր միաբանը (աշխարհիկ անունը Գալուստ Տեր-Մկրտչյան) առաջարկում է Մանուկ Աբեղյանին զեկույց պատրաստել ուղղագրության վերափոխման մասին: Աբեղյանը հարցաթերթիկներ է ուղարկում ականավոր հայագետներին, որոնք էլ գրեթե բոլորը դեմ են արտահայտվում ուղղագրության փոփոխմանը: Յատկանշանական է հայագետ Անտուան Մեյեի պատասխանը: Նա դեմ չի ուղղագրության փոփոխությանը, որպես այդպիսին, բայց գտնում է, որ «...այնպիսի ազգի մեջ, որտեղ չկա որոշ ուղղագրություն պարտադրելու ընդունակ հեղինակություն ամենախելոք բանը ավանդական ուղղագրությամբ բավարարվելն է...»: Յայագետը նկատի ունի այն, որ պետության բացակայության պայմաններում վերափոխումը կարող է ավելի շատ վնաս բերի քան օգուտ: Յետագայում նա մասնակցեց ժամանակակից ուղղագրության ստեղծմանը, երբ արդեն կար Յայաստանի երկրորդ հանրապետությունը: Յայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո կոմունիստական կուսակցությունն առաջ է քաշում հավակնոտ ծրագրեր, որոնց մեջ էր մտնում նաև զանգվածային անգրագիտության վերացումը: Գրեթե բոլոր խորհրդային հանրապետություններում ձեռնարկվում են

ուղղագրության փոփոխություններ, իսկ իսլամադավան հանրապետություններում փոխվում են նաև այբուբենները: 1921 թ.ին ՅԽՍՀ լուսժողկոմը (լուսավորության ժողովրդական կոմիսարիատ) Մանուկ Աբեդյանին առաջարկում է ներկայացնել ուղղագրության վերափոխումների նախագիծ: Աբեդյանը կազմում է ուղղագրության 4 տարբերակ՝ ամենամեղմից մինչև ամենախիստ տարբերակը: Լուսժողկոմը 1922 մարտի 4-ին առանց հանրային քննարկումների ու Աբեդյանի վերջնական համաձայնության միանձնյա որոշմամբ ընդունում է ամենախիստ տարբերակը, որը ենդադրում էր լիարժեք հնչյունային ուղղագրություն:

1940 թ. ուղղագրության մասնակի բարեփոխությունը

Լուսժողկոմի ծայրահեղացված հեղափոխականությունը, քննարկումների և դրանց հիման վրա ընտրության հնարավորության բացառումը դժգոհություն էին առաջացրել մտավորականների շրջանում: Քանի որ ոչ մեկը չէր հանդգնում ուղղակիորեն քննադատել լուսժողկոմի 1922 թ.-ի միանձնյա որոշումը, ապա հարձակումների թիրախ է դառնում Մանուկ Աբեդյանը: Առանց քննարկումների ուղղագրության փոփոխության որոշում կայացնելուն ընդդիմանում է Յովհաննես Թումանյանը, որն իր դժգոհությունը հայտնում է լուսժողկոմատին գրած իր նամակով: Դժգոհությունների պատճառով 1926 թվին ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում էին Մանուկ Աբեդյանը, Յրաչյա Աճառյանը, Թադևոս Ավդալբեգյանը, Սիմոն Յակոբյանը, Յակոբ Մանանդյանը, Գրիգոր Ղափանցյանը, Լեոն, Շիրվանզադեն և ուրիշներ: 1927 թ. ապրիլի 5-ի նիստում, բացի ներկաների ելույթներից ու տեսակետներից, ընթերցվում են նաև Նիկողայոս Մառի, Անտուան Մեյեի և այլոց կարծիքները: 1940 թ. օգոստոսի 10-ին, ՅԽՍՀ Մինիստրների խորհուրդը, հիմք ընդունելով Տերմինաբանական կոմիտեի ներկայացրած նախագիծը, ընդունում է 1922 թ. ուղղագրութիւնը մասնակիորեն բարեփոխելու որոշումը:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հայերենի արդի ուղղագրությունը ստեղծվել է 20-րդ դարի սկզբի լավագույն հայագետների ու լեզվաբանների միասնական աշխատանքով:

Մեսրոպյան ուղղագրություն – 5-րդ դարից մինչև 11-րդ դար: Գրաբարի դասական ուղղագրությունն է: (Յայաստանի գիտական շրջանակներում

մեսրոպյան ուղղագրությամբ ստեղծված գրականությունը ընդունված է անվանել դասական)

Ավանդական ուղղագրություն – 12-րդ դարից մինչև 20-րդ դարի սկիզբ: Միջին հայերեն գրական լեզվի ուղղագրություն: Արևմտահայերեն գրական լեզվի ուղղագրություն: (1922-ից հետո սփյուռքում ավանդական ուղղագրությունը սկսեցին նաև անվանել դասական ի հակադրություն նոր ուղղագրության)

Արդի վերափոխված ուղղագրություն – 1940 թվականից մինչ այսօր ՀՀ տարածքում (մի կարճ ժամանակահատված գործել է Մանուկ Աբեղյանի՝ հնչյունական սկզբունքի վրա հիմնված ուղղագրությունը (1922-1940)):

Ուղղագրական ռեֆորմները, այնուամենայնիվ, չազդեցին արեւմտահայ եւ իրանահայ գաղութների վրա, ովքեր շարունակեցին եւ մինչ օրս շարունակում են կիրառել բացառապէս ավանդական ուղղագրությունը: ՀՀ անկախացումից հետո հայաստանաբնակ հայերի շրջանում ազգային զարթոնք սկսվեց, որի ժամանակ էլ որոշ մարդիկ սկսեցին բոյկոտել արդի ուղղագրությունը՝ կիրառելով միայն ավանդականը: Նրանց սկսեցին պաշտպանել եւ սատարել նաեւ որոշ հոգեւոր եւ գիտական գործիչներ: Հարց բարձրացվեց վերականգնելու ավանդական ուղղագրությունը, սակայն այն պատշաճ ուշադրության չարժանացավ: Մինչ օրս էլ հայերենի ուղղագրությունն ընդհանրացված չէ:

Ուղղախոսության ուսուցման սկզբունքները

Մարդիկ բառերը արտասանում են տարբեր եղանակներով: Բայց գրական լեզուն ունի ամեն մի բառի արտասանության ճիշտ եղանակը, որը պարտադիր է հայերեն խոսող բոլոր մարդկանց համար: **Ուղղախոսությունը** ճիշտ խոսելու և գրվածը ճիշտ կարդալու բոլոր կանոնների ամբողջությունն է:

Չայերենի յուրաքանչյուր հնչյուն ունի իր տառը: Սակայն կան շեղումներ

- Է հնչյունի համար ունենք **է** և **ե** տառերը.
- օ հնչյունի համար՝ **օ** և **ո** տառերը.
- յեվ կամ եվ հնչյունախմբերի համար՝ **և /եվ/** տառը.
- կան նաև չարտասանվող, բայց գրվող տառեր. **հ**-ն չի լսվում, բայց գրվում է աշխարհ, խոնարհ, շնորհ, ճանապարհ բառերում.
- կան արտասանվող հնչյուններ, որոնք չեն գրվում՝ երկու բաղաձայնների միջև:
- **ը** հնչյունը լսվում, բայց չի գրվում՝ կտրտել, արտասանվում է՝ կըտըրտել, Մկրտիչ, արտասանվում է՝ Մըկըրտիչ
- երկու ձայնավորների միջև **յ** հնչյունը լսվում, բայց չի գրվում՝ գրեի, արտասանվում է՝ գրեյի, Գայանեից, արտասանվում է՝Գայանեյից, վերարկուով, արտասանվում է՝ վերարկույով և այլն:
- • բառասկզբում լսվող յե-ն գրվում է մեկ տառով՝ ե. երագ, արտասանվում է՝ յերագ երեկո, արտասանվում է՝.յերեկո
- • բառասկզբում լսվող վօ-ն գրվում է մեկ տառով՝ ո. որս, արտասանվում է՝ վօրս, ոզնի, արտասանվում է՝ վոզնի:

Այսինքն կան դեպքեր, երբ հնչյունները բառի մեջ ավելի շատ են, քան տառերը: Օրինակ՝ ոտք բառի մեջ լսում ենք 4 հնչյուն՝ վոտք, բայց գրում ենք 3 տառով՝ ոտք, նայել բառում լսում ենք 5 հնչյուն, բայց գրում ենք 3 տառով՝ նաև: Կան նաև դեպքեր, երբ հնչյուններն ավելի քիչ են, քան տառերը, օրինակ՝

արտասանում ենք՝ աշխար - 5 հնչյուն, բայց գրում ենք 6 տառով՝ աշխարհ: Բառը կազմված է հնչյուններից. հնչյունը մենք լսում և արտասանում ենք:

Ուսուցումից հետո սովորողներին կարելի է ստուգիչ թեստ տալ, օրինակ՝

Որոշիր ճիշտ պատասխանը:

- Երեխա բառում քանի՞ հնչյուն ես լսում՝ 6 կամ 5
- Երեխա բառը քանի՞ տառով ես գրում՝ 5 կամ 6

Բարձրաձայն կարդա՛ տրված բառերը: Նշի՛ր այն շարքի համարը, որի բոլոր բառերը **նույն արտասանությունը և գրությունն ունեն:**

- 1) օտարական, ծովափրփուր, Էակ, Ելակ
- 2) խնձոր, դեղձանիկ, աղբյուր, եղջյուր
- 3) ծարավ, առեջաթել, ինքնակամ, սանրել
- 4) ապուրաման, օթոց, օղակել, ողկույզ

Է-ի և Ե-ի արտասանությունը և ուղղագրությունը

1 Բառասկզբում լսվող Է հնչյունը գրվում է **Է** տառով. օրինակ՝ **Էջ, Էշ, Էկրան, Է, Էի, Էիր, Էր, Էինք, Էիք, Էին, Էջմիածին, Էրեբունի:** Բացառություն՝ **Եմ, Ես, Ենք, Եք, Են** օժանդակ բայի սկզբում լսվող Է հնչյունը գրվում է **Ե** տառով. օրինակ՝ **գրում եմ, գրում ես, կարդում ենք, կարդում եք, վազում են:**

2.Բառամիջում և բառավերջում լսվող **Է** հնչյունը գրվում է **ե** տառով. օրինակ՝ գրել **/ԳԸՐԷԼ/**, երբևիցե **/ԵՐՓԵՎԻՅԷ/**, բերել **/ԲԵՐԷԼ/**:

3.Բառամիջում և բառավերջում **Է** գրում ենք, եթե ունենք **Է**-ով սկսվող արմատ. օրինակ՝

- **Է**- երբևէ, ինչևէ, որևէ, մանրէ, մանրեաբան, հնէաբան, անէանալ,
- **Էջ** - առէջ, ելևէջ, վայրէջք
- **Էկրան**- լայնէկրան, հեռուստատեկրան
- **Էներգիա** - էլեկտրաէներգիա

4. Բառասկզբում լսվող **ՅԷ** հնչյունախումբը գրվում է մեկ տառով՝ **ե**. օրինակ՝ ես, երգ, եղևիկ, ելարան, եռյակ:Բաղաձայնից հետո **ե** տառն արտասանվում է **Է**. օրինակ՝ տասներկու **/ՏԱՍՆԵՐԿՈՒ/**, մեներգ **/ՄԵՆԵՐԳ/**:Ձայնավորից հետո **ե** տառն արտասանվում է **ՅԷ**. օրինակ՝ ամենաերկար **/ԱՄԵՆԱՅԵՐԿԱՐ/**, վրաերթ **/ՎՐԱՅԵՐԹ/**։ **Կ /ԿԸ/**, **Չ /ՉԸ/** մասնիկներից հետո **ե** տառն արտասանվում է **ՅԷ**. օրինակ՝ կերգեմ **/ԿԸՅԵՐԳԵՄ/**, չերագել **/ՉԸՅԵՐԱՉԷԼ/**:

Թեևս՝ 1.Կետերի փոխարեն **Է** կամ **ե** տառ ավելացրո՛ւ, որ ստանաս կազմությանը ածանցավոր բառ: ...րբեք

- **Պատասխան.** ----- տառը
- **Պատասխան.**----- բառը

2.Որոշիր այն բառը, որը պիտի ավելացնես նախադասության բաց թողած տեղում

Յուշում: Անհրաժեշտության դեպքում բառը գրի՛ր փոփոխված ձևով:

Մեր մայրաքաղաքի շատ թաղամասեր օգտվում ենարտադրած
Էներգիայից: (ԵրևանԷԷԿ, ԵրևանԷՆԷՐ)

Պատասխան՝ -----

3.Գտի՛ր բառը:

մարդու արած լավ գործը, վաստակը նշանակող բառը

Հուշում: Բառասկզբում գրվում է Ե-ով:

Պատասխան.-----

Ուղղագրության ուսուցման սկզբունքները

Ուղղագրությունը ճիշտ գրելու կանոնների ամբողջությունն է: Գրավոր խոսքում հնչյունի պայմանական նշանը **տառն** է: **Տառը** կարդում ենք և գրում: Որևէ լեզվի տառերի հաջորդական դասավորվածությունը կոչվում է այբուբեն (անունն առաջացել է հայերենի առաջին երկու տառերի անուններից՝ **Ա-այբ, Բ-բեն: Այբուբեն** բառը հայերենի բառապաշար է մտել հունարեն բառի պատճենման արդյունքում (ալֆաբեթ՝ ալֆա +բեթա՝ հունական այբուբենի առաջին երկու տառերի անունները): Ճիշտ այդ ձևով է ստեղծվել հայերեն **այբուբեն** (այբ+ու+բեն) բառը:

Այբուբենը լեզվի հնչյունների համար ստեղծված գրային նշանների համակարգ է, որի մեջ դրանք ներկայանում են որոշակի, ընդունված դասավորությամբ: Մեսրոպյան այբուբենն ուներ 36 տառ: Այն սկսվում էր **Ա**-ով և ավարտվում **Բ** տառով: Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենն առանց էական փոփոխության մեզ ծառայում է արդեն 1617 տարի: 12-րդ դարում անհրաժեշտության բերումով հայ ոց այբուբենը համալրվեց ևս երկու տառով՝ **օ, Ֆ**: Հայոց այբուբենի տառերը գործածվել և այժմ էլ մասամբ գործածվում են թվային արժեքներով: 36 տառերը համակարգված են չորս շարքով. առաջին շարքում միավորներն են, երկրորդում՝ տասնավորները, երրորդում՝ հարյուրավորները, չորրորդում՝ հազարավորները: Այսպես՝ Եթե, օրինակ, ցանկանում ենք գրել 2022 թիվը, ապա նախ գրում ենք հազարավորը ցույց տվող տառը, ապա՝ հարյուրավորը, տասնավորը և վերջապես՝ միավորի տառը, այսինքն՝ **ՍԻԲ**: տառային համարժեքն է՝ 405- ի տառային արժեքն է՝ **ՆԵ** և այլն:

Ա - 1	Ժ - 10	Ճ - 100	Ռ - 1000
Բ - 2	Ի - 20	Ս - 200	Ս - 2000
Գ - 3	Լ - 30	Յ - 300	Վ - 3000
Դ - 4	Խ - 40	Ն - 400	Տ - 4000
Ե - 5	Ճ - 50	Շ - 500	Ր - 5000
Զ - 6	Կ - 60	Ո - 600	Տ - 6000
Է - 7	Յ - 70	Չ - 700	ՈՒ - 7000
Ը - 8	Ձ - 80	Պ - 800	Փ - 8000
Թ - 9	Ղ - 90	Ջ - 900	Ք - 9000

Հայերեն տառերն ունեն իրենց անունները՝

Ա — Այբ	Ժ — ժե	Ճ — ճե	Դ — Դա	Ա--ել
Բ — Բեն	Ի — Իկի	Մ — Մեն	Ս — Սե	Օ — Օ
Գ — Գիմ	Լ — Լյուն	Յ — Յի	Վ — Վել	Ֆ — Ֆե
Դ — Դա	Խ — Խե	Ն — Նու	Տ — Տյուն	
Ե — Եչ	Ծ — Ծա	Շ — Շա	Ց — Ցո	
Զ — Զա	Կ — Կեն	Ո — Վո	Փ — Փյուր	
Է — Է	Յ — Յո	Չ — Չա	Ր — Րե	
Ը — Ըթ	Ձ — Ձա	Պ — Պե	Ի(Լ) — Վյուն	
Թ --- Թո	Ղ — Ղատ	Ջ — Ջե	Ք — Քե	

Ուղղագրության ուսուցումը մշտապես հենվում է լեզվի իրական գործածության վրա: Խոսքի յուրացման աշխատանքը ստեղծագործական աշխատանք է, որը կապվում է սովորողի առօրյա գործունեության և միջավայրի (ընտանիք, բակ, թաղ, դպրոց), հետ, Այսպիսով՝ սովորողն անընդհատ իր գրավոր և բանավոր խոսքը ճիշտ և հասկանալի ձևակերպելու խնդրի առաջ է

կանգնած: Այսպիսի աշխատանքները սովորողների խոսքային ինքնարտահայտման պահանջմունքի և բավարարման իրական միջավայր են ձևավորում, ստեղծում հաղորդակցման ազատ և բնական պայմաններ: Լեզվական գիտելիքների յուրացման աշխատանքը նաև հետազոտական աշխատանք է, որի ժամանակ սովորողը ինքնուրույն վերլուծում և համադրում է, օրինաչափություն գտնում, սահմանում, ինչպես նաև՝կարևորում է բանավոր և գրավոր մտքի գրագետ ձևակերպումը, կատարելագործվում է սովորողի ստեղծագործական և քննադատական մտածողությունը, զարգանում են խմբագրական և թարգմանական հմտությունները, ձևավորվում է հրապարակային խոսքը, անկաշկանդ արտահայտվելու ունակությունները

մայրենի լեզվի ուսուցման խնդիրներն են՝

- Գրավոր ու բանավոր խոսքի զարգացումը
- Վերլուծական ու նկարագրական հմտությունների, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացումը
- Լեզվաբանական գիտելիքների յուրացման և լեզվական նյութի միջոցով՝ սովորողների լեզվաճանաչողության կատարելագործումը
- Մեդիահմտությունների անընդհատ զարգացման միջոցով խոսքի, ստեղծագործական մտահղացումների հրապարակայնացում, հանրայնացում (բլոգի, կայքի, սոցցանցի և վիրտուալ այլ միջոցներով).
- Համացանցային տեղեկատվական տիրություն կողմնորոշվելու կարողության, բառարաններից և տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու հմտությունների զարգացումը
- Կարդալու (ըմբռնելու, փոխադրելու) կարողության ձևավորում և զարգացում.
- Լսելու (ըմբռնելու, փոխադրելու) կարողության ձևավորում և զարգացում.

- որոշակի թեմայով խոսքի ձևակերպման կարողության ձևավորում և զարգացում. լեզվական-խոսքային կարողությունների զարգացում: Հայոց լեզվի ուսուցիչը պետք է շարունակ զբաղվի ինքնակրթությամբ, մշտապես հաղորդակցվի գրական մաքուր հայերենով, հետևի սովորողի խոսքին, համագործակցի մասնախմբի ղեկավարի, անհրաժեշտության դեպքում նաև մայրենի լեզվի մյուս ուսուցչների հետ

Գործունեության ձևերը: Սովորողները ամենօրյա գործունեության արդյունքում՝ վերլուծություններ, փոխադրություններ, ու տպավորություններ ներկայացնելիս, հարցազրույց վարելիս, առցանց դասերի ու քննարկումների մասնակցելիս, թարգմանություններ անելիս, շարունակ հղկում ու կատարելագործում են իրենց խոսքը: Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը անհրաժեշտ է կազմակերպել ուսումնական հնարավոր թվային միջոցների լիարժեք և ամբողջական կիրառմամբ (համացանցի, անհատական թվային գործիքներ, նոթբուք, ձայնագրիչ, տեսախցիկ, ֆոտոխցիկ): Ուսումնական նյութերը ստեղծվում են՝ համակարգչային նոր ծրագրերի յուրացման ու կիրառման արդյունքում: Սովորողի կողմից գործածվող անհատական թվային միջոցները նպաստում են նրա ինքնարտահայտման հնարավորությունների կատարելագործմանը, ասելիքը ամբողջական, առավել գրավիչ դարձնում: Ուսուցչի կողմից տրված առաջադրանքները պիտի մատչելի լինեն այնքան, որ սովորողը ցանկանա և կարողանա հնարավորին չափ ինքնուրույն կատարել դրանք: Սովորողը գրագետ է դառնում խորասուզված մտավոր աշխատանք կատարելու ընթացքում:

Լեզվաբանական գիտելիքների յուրացումը երկակի է՝ նպաստում սովորողի խոսքի մշակմանը: Դա միաժամանակ և՛ միջոց է դառնում, որ նա մտածի և խոսի, և՛ հիմք՝ լեզվագործունեության հետագա զարգացման համար: Մի կողմից՝ նա դատողություններ է անում և ձևակերպում՝ յուրացնելով խոսքի որոշակի ոճ ու կաղապարներ, մյուս կողմից սովորում է օրինաչափություններ ու դրանք գործածում խոսքում: Լեզվական համակարգն ուսուցանող առաջադրանքների մեծ մասը (մանավանդ՝ թեմաներն ամփոփող) ուղղված է

խոսքին: Ուսուցիչն անընդհատ հետևում է, որ սովորողի խոսքը կադապարված ու միօրինակ չլինի, բայց և ենթարկվի ուսուցանված լեզվական օրենքներին և օրինաչափություններին:

Ուղիղ գրելու (ուղղագրությունը յուրացնելու) համար սովորողն աշխատում է ուսումնառության ամբողջ ընթացքում արտասանությամբ և գրությամբ տարբեր բառեր գործածելու, ուղղագրական օրենքներ ու կանոններ յուրացնելու, նաև՝ գրածը ճշտելու, կոնկրետ բառի ուղղագրության վրա ուշադրություն դարձնելու միջոցով: Ուսուցչի խնդիրը նաև ուղղագրական բառարաններից օգտվել սովորեցնելը և այդ աշխատանքին վարժեցնելն է:

Ուսումնական աշխատանքի ձևերը

- ուսումնական նյութը ըմբռնելուն ուղղված աշխատանք
- անձանոթ բառերի, եզրույթների բացատրություն,
- նախադասությունների վերաշարադրելուն և հոմանիշ կառույցներով փոխարինելուն ուղղված աշխատանք,
- մասնագիտական բառարանների, գիտահանրամատչելի, հանրագիտարանային գրականության գործածում և այլն.
 - բանավոր և գրավոր խոսքի մշակման, լեզվական օրինաչափությունների յուրացման վարժությունների և առաջադրանքների կատարում.
 - խոսքային-արտադրական (ստեղծագործական) աշխատանք.
 - ուսումնական այլ նյութերի ստեղծումը.
 - բանավոր խոսքի վերլուծում-խմբագրում. հնչերանգային թերությունները,
 - ստուգողական աշխատանք (ինքնաստուգում, ստուգում):

Բացի կոնկրետ առաջադրանքը կատարելուց, սովորողը նյութից ակամա վերցնում է լեզվական կառույցներ ու կադապարներ, սեփականում բառեր ու արտահայտություններ:

Լեզվական նյութի, կատարված լեզվական աշխատանքի ու զանազան շարադրությունների քննարկումները, զրույցներն ու բանավեճերն օգնում են, որ սովորողը մտքերը զրուցակցի համար հասկանալի ու փաստարկված շարադրել, լսել, տրամաբանված խոսել սովորի, մտածել՝ լսելու ընթացքում, իր և ընկերների խոսքում գտնել հակասություններն ու անճշտությունները, համոզել, ապացուցել, համաձայնել, հանդուրժել տարակարծությունը:

Ուսուցման և ուսումնառության համար չափազանց կարևոր է նաև ուսուցման **Նյութական միջավայրը**: Ցանկալի միջավայր կարելի է ստեղծել ուսումնական կաբինետ-ընթերցասրահով՝ անխափան ինտերնետ կապով, ձայնային ուժեղարարով, դասավանդողի, սովորողների անհատական համակարգիչ, տեսագրող, ձայնագրող, լուսանկարող թվային միջոցներ: Ուսումնական անհատական թվային միջոցներ (պլանշետ, նեթբուք, նոթբուք), ֆոտոխցիկ, ձայնագրիչ. Դպրոցի ուսումնական տարածքները, այդ թվում՝ բակը. Քաղաքը՝ թանգարան, ցուցասրահ, համերգասրահ, թատրոն, կինոթատրոն, մշակութային այլ կենտրոն, հուշարձան, փողոց, այգի: Այցելությունները գյուղ, քաղաք, որևէ տեսարժան վայր, ճարտարապետական կոթող, պատմության, բնության հուշարձան և այլն:

Ուղղագրության և ուղղախոսության յուրացումը Մայրենիի միասնացված դասագրքում զուգահեռվում են **գրականագիտական նախագիտելիքների** հետ: Սովորողները ծանոթանում են հայ ժողովրդի բանահյուսության նմուշների գրական մշակումներին, հեքիաթին, ժանրի բնորոշմանը, տեսակներին, առակին, բնորոշ այլաբանությունը և բարոյախոսությունը չափածո և արձակ ստեղծագործություններին, հանգին, ռիթմին, գեղարվեստական ստեղծագործության արտահայտչամիջոցներին(համեմատություններ, փոխաբերություններ, մակդիրներ):

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուղղագրությունը ու ողղախոսությունը եղել և մնում են մեր լեզվի ուսուցման ամենախրթին, կնճռոտ և երբեք վերջին չհասնող հարցերը: Ուղղագրական հմտությունների մշակումը բավականին բարդ և ժամանակատար գործընթաց է: Ուղղագրության ուսուցման գործընթացը կազմակերպելիս պիտի հիշել, որ երեխան բառն արտասանում է ամբողջությամբ, սակայն այն գրում է մաս-մաս արտասանելով և համադրելով:

Եթե աշակերտը տարբերակում է բառի հնչյունները, ճիշտ է արտաբերում դրանք/այսինքն՝ ունի զարգացած հնչյունային լսողություն և վերարտադրման կարողություն/, ուրեմն՝ նա նշանակալիորեն դյուրինությամբ կհաղթահարի ուղղագրության ուսուցման գործընթացում ծագած դժվարությունները:

Տարատեսակ վարժությունների համակարգ կարելի է մշակել՝ ինչ մեթոդներ կիրառել ուղղագրության ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար: Երեխաների մեջ ուղղագրական հմտություններ ձևավորելու համար բառերի առանձին խմբերի բազմիցս գրելը ոչնչով չի օգնում: Այդպիսի գործընթացը ավտոմատացված է, չգիտակցված. երեխան կարող է տասն անգամ գրել միևնույն բառը/մեխանիկորեն/ և տասնմեկերորդ անգամ սխալվել: Ուղղագրության իմացության հիմնական խնդիրներից մեկն էլ ժամանակակից հաղորդակցման ձևերի կիրառման ժամանակ լատինատառ գրելն ու գրառումները հայերեն կատարելուց հրաժարվելն է: Գրում են մեխանիկորեն

հարմարեցված լատինատառ, շատ հաճախ այն կիրառում են նաև ուսումնառության ընթացքում:

Այս առումով հետազոտական աշխատանքիս թեման խիստ արդիական է. ուղղագրության և ուղղախոսության ուսուցումն կնպաստի, որ սովորողը բանավոր խոսքում ճիշտ կիրառի հայերենի հնչյունների արտաբերման և արտասանության կանոնները, տարբերի ձայնավոր և բացղաձայն հնչյունները, մատնանշի դրանց գրության և արտասանության տարբերությունները, ճիշտ արտասանի և ճիշտ գրի գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերը, բանավոր խոսքում պահպանի հայերենին հատուկ շեշտադրումով արտասանությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Մ. Աբեղյան, Չայոց լեզվի տեսություն, Երևան., 1965

2.Գ.Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան., 1984

3. Թ. Ղարաբուլյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան., 1974

<https://www.youtube.com/>

<https://www.imdproc.am/p/mayreni/5-dasaran>